Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1291 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են բնապահպանական հարկ վճարողների և բնօգտագործման վճար վճարողների (այսուհետ՝ վճարողներ) կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 180-րդ և 220-րդ հոդվածներին համապատասխան՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկի (այսուհետ՝ միասնական հարկային հաշվարկ) ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Օրենսգրքի 180-րդ և 220-րդ հոդվածներին և սույն կարգին համապատասխան՝ միասնական հարկային հաշվարկ (այդ թվում՝ ճշտված) ներկայացնում են օրենսգրքի 175-րդ հոդվածին համապատասխան՝ արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար, 177-րդ հոդվածին համապատասխան՝ ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար, 178-րդ հոդվածին համապատասխան՝ ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկ վճարողները և (կամ) 179-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկ վճարողները և (կամ) օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերով սահմանված բնօգտագործման վճար վճարողները:

3. Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան կազմված միասնական հարկային հաշվարկները սույն կարգին համապատասխան՝ ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, օրենսգրքի 310-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմնի հետ կնքված՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագրի հիման վրա և էլեկտրոնային թվային ստորագրության, էլեկտրոնային ծածկագրի ու գաղտնաբառի կիրառության միջոցով: Միասնական հարկային հաշվարկները թղթային եղանակով կարող են ներկայացվել օրենսգրքի 53-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում:

4. Վճարողն էլեկտրոնային եղանակով հարկային միասնական հաշվարկ ներկայացնելու համար հարկային մարմնի՝ հարկային հաշվարկների ընդունման էլեկտրոնային համակարգում ընտրում է միասնական հարկային հաշվարկը, որը բաղկացած է դիմային մասից և հավելվածից:

5. Վճարողը լրացնում է միասնական հարկային հաշվարկի հավելվածը (արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար, ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկի և (կամ) բնօգտագործման վճարի), որը պետք է ներկայացնի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ հաստատման: Օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկ վճարողը լրացնում է միասնական հարկային հաշվարկի դիմային մասը: Տվյալ հաշվետու ժամանակաշրջանում բացառապես դիմային մասով նախատեսված՝ օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան՝

շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկ վճարող համարվելու դեպքում դիմային մասում կատարվում է համապատասխան նշում, որի դեպքում հավելվածը լիազոր մարմնի հաստատման կարող է չներկայացվել: Էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված միասնական հարկային հաշվարկն ուղարկվում է հարկային մարմնի տեղեկատվական համակարգ:

6. Վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված միասնական հարկային հաշվարկում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով, օրենսգրքի 54-րդ հոդվածին համապատասխան՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով լրացվում և ներկայացվում է ճշտված միասնական հարկային հաշվարկ:

7. Միասնական հարկային հաշվարկներ (այդ թվում՝ ճշտված) չեն կարող ներկայացվել այն դեպքերում, երբ միասնական հարկային հաշվարկը վերաբերում է՝

1) այն հաշվետու ժամանակաշրջանին, որն արդեն ստուգվել է հարկային մարմնի կամ լիազոր մարմնի կողմից.

2) այն հաշվետու ժամանակաշրջանին, որի ստուգումը հարկային կամ լիազոր մարմնի կողմից սկսվել է (այդ թվում՝ միասնական հարկային հաշվարկի ներկայացման օրն ստուգման ընթացքը կասեցված է).

3) այն հաշվետու ժամանակաշրջանին, որի վերջին օրվանից անցել է երեք տարի:

8. Միասնական հարկային հաշվարկը հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում հարկային մարմնի՝ հարկային հաշվարկների ընդունման էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հարկ վճարողին ներկայացվում է միասնական հարկային հաշվարկի ստացումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցում, որում նշվում է ստացման ամսաթիվը և տեղեկատվական բազայում գրանցման համարը: Ծանուցման մեջ նշված ամսաթիվը հանդիսանում է միասնական հարկային

հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու օր, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետում նշված դեպքերի:

9. Հարկային մարմինը միասնական հարկային հաշվարկի (այդ թվում՝ ճշտված) ներկայացման օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում միասնական հարկային հաշվարկը (այդ թվում՝ ճշտված) էլեկտրոնային եղանակով ներկայացնում է լիազոր մարմին:

10. Եթե լիազոր մարմնում գրանցման համար ներկայացված միասնական հարկային հաշվարկի (այդ թվում՝ ճշտված) հավելվածները գրանցման առումով ենթակա են ճշտման, ապա լիազոր մարմինը դրանք ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով գրավոր ծանուցում է վճարողին՝ միասնական հարկային հաշվարկի ճշտման անհրաժեշտության մասին: Վճարողն օրենսգրքի 54-րդ հոդվածին համապատասխան՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով լրացնում և ներկայացնում է ճշտված միասնական հարկային հաշվարկ:

11. Եթե միասնական հարկային հաշվարկը (այդ թվում՝ ճշտված) ներկայացվել է օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված՝ սույն կարգի 7-րդ կետում նշված պահանջների խախտմամբ, ապա լիազոր մարմինը դրանք ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հարկ վճարողին և հարկային մարմնին: Սույն կետում նշված դեպքում միասնական հարկային հաշվարկը (այդ թվում՝ ճշտված) հարկային մարմնի հարկային հաշվարկների ընդունման էլեկտրոնային համակարգում համարվում է չընդունված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ